«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը

Պատմության դասավանդման ընթացքում

ՀԵՂԻՆԱԿ՝ Անի Հակոբյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/՝ 4-րդ/ Պատմություն

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

1. Ներածություն----------3

2. Ինքնուրույնություն և նախաձեռնողականություն----------5

3. Սովորողների ինքնուրույն մտածողության հմտությունների համակարգի ձևավորումը պատմության դասերին ---------- 8

4. Եզրակացություն----------16

5. Օգտագործված գրականության ցանկ---------- 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այժմ բոլոր ոլորտներում, այդ թվում նաև կրթական համակարգում, գիտական ու տեխնիկական առաջընթացով պայմանավորված, շարունակական կերպով տեղի են ունենում արդիականացման գործընթացներ, որոնց հիմնական նպատակն է համակարգել հնարավոր բոլոր ռեսուրսները՝ տեխնոլոգիական, մարդկային՝դրանք ծառայեցնելով կրթական նոր ու արդիական որակների ապահովմանը: Կրթական բարեփոխումների առանցքում կրթության առաջնային խնդիր է հանդիսանում վերարժևորել սովորողների գործառույթներն ու պարտականությունները՝ հաշվի առնելով ժամանակի մարտահրավերները: Եթե խորհրդային դպրոցում սովորողն իր ցանկությունների ու ձգտումների մեջ առավել քան կաղապարված էր՝ հաշվի առնելով տվյալ կրթական համակարգին բնորոշ առանձնահատկությունները, ապա այսօրվա սովորողն այդ տեսանկունից առավել ազատ է: Այսօրվա երեխաներին ընձեռված է նորարական ծրագրերով և տեխնոլոգիաներով կրթվելու հասանելիությունը և հնարավորությունը: Նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումը կրթական համակարգ հնարավորություն է տալիս սովորողին դառնալ դասի ընթացքի անմիջական նախագծողը, և արդյունքում բուն դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինել ձանձրալի, ավելին՝ սովորողը մոտիվացվում է, իսկ այդ մոտիվացիայի պատճառներից մեկն էլ աշակերտակենտրոն ուսուցումն է: Հարկավ, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների վերարժևորում: Նմանօրինակ բարեփոխումները մեծապես խթանում են սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանը, ինչպես նաև ստեղծագործ մտածելու ու գործելու կարողությանը: Իսկ այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը , նախաձեռնողականությունը[1]:

[1] Մանկավարժություն, Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Ե. 2008/3-4

Այս կոնտեքստում առանձնակի կարևորություն Պատմություն առարկայի դասավանդման շրջանակներում ուսուցչի զանազան մեթոդամանկավարժական հնարների, դասի զանազան տիպերի ու ձևերի ներդրումը, որի արդյունքում կարող է հասնել հանրակրթական պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին, որոնցից են սովորողների ինքնուրույն, նախաձեռնող և ստեղծագործական ունակություններով զարգացած անհատի ձևավորումը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, կարծիք հայտնելու, օգտվելու, վերաբերմունք արտահայտելու, կարևորելու որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործաբար մտածելու ունակությունները՝ ամեն կերպ խթանելով սովորողի ինքնուրույն գործելու ցանկացած դրսևրում:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է շեշտադրել աշակերտակենտրոն դասի կարևորությունը՝ որպես կրթության որակի բարձրացման հիմնական նախապայման, այդ գործընթացում կարևորել ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի գործառական դերը սովորողի ինքնուրույնության, ստեղծարարության ու նախաձեռնողականության դրսևորումների, անկախաբար աշխատելու ունակության որակի բարձրացմանը :

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է շեշտադրել ակտիվ ուսուցման արդյունավետությունը,ձևավորել ինքնակազմակերպման հմտություն, արժևորել սովորողի անկախ, ինքնուրույն գործելու, դասի ընթացքին ստեղծարար մոտեցում ցուցաբերելու կարևորությունը և նշանակությունը, ինչպես նաև ցույց տալ ուսուցչի կողմից ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության դերն ու նշանակությունը՝ որպես կրթական համակարգի արդիականացման բաղադրիչ՝ պայմանավորված կրթության նոր չափորոշչի պահանջներով, որտեղ դասավանդողն ու սովորողը հանդես են գալիս որպես համագործակցող սուբյեկտներ:

1. Ինքնուրույնություն և նախաձեռնողականություն

Ժամանակակից կրթության առաջնահերթ խնդիրներից մեկն այնպիսի անհատի ձևավորումն է, ով կկարողանա կողմնորոշվել շրջապատող աշխարհում և կինտեգրվի այդ աշխարհին:Այդ խնդիրը հաջողությամբ կարող է լուծել միայն այն մարդը, ով տիրապետում է ինքնուրույն մտածողության հմտություններին:

Ներկա ժամանակներում, առավել քան երբևէ, մարդու ցանկացած գործունեության համար առանցքային նշանակություն ունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, արագ և նպատակային գործելու, ինչպես նաև նախաձեռնող լինելու ունակությունները: Նման ունակությունների անհրաժեշտությունը բացատրվում է ներկայիս առաջ քաշած մարտահրավերներով, քանի որ ամենժամյա ռեժիմով կյանքի բոլոր ոլորտները գրանցում են աննախադեպ առաջընթաց: Նշված հատկանիշները սաղմանավորվում և զարգանում են հանրակրթական ուսումնական հաստատություններում, որտեղ էլ տեղի է ունենում անձի կրթական և դաստիարակչական առանցքային գործընթացը:

Զարգանում և արդիականացվում է նաև կրթական համակարգը՝ փորձելով գործի դնել նոր աշխարհի կանոններով ապրող մարդու կրթության իրավունքը՝ հաշվի առնելով կրթական նոր տեխնոլոգիաները և առաջավոր փորձը:

Ուսումնական գործընթացի կենտրոնում սովորողն ու սովորեցնողն են: Ժամանակակից ուսուցչի որակներից առանձնակի կարևորություն ունի հանդուրժողականությունը, համագործակցելու, ոգևորելու կարողությունը, քանի որ եթե ինչ-որ ժամանակ առաջ պարտադրվում էր սովորողին այս կամ այն գիտելիքի, հմտության յուրացում՝անտեսելով նրա դիրքորոշումն ու վերաբերմունքը, ապա այսօր սովորողն ինքն է իրեն ձևավորում, իսկ ուսուցիչը պարզապես փորձում է ուղղորդել նրան: Հետևաբար կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե որքան է ուսուցիչը պատրաստ համագործակցության և փոխվստահության մթնոլորտի ձևավորման:

Ինքնուրույնության ձևավորման առաջին նախադրյալը ազատությունն է; Որպեսզի աշակերտը ինքնուրույն ուսումնական գործունեության ծավալի, նրան

անհրաժեշտ է տալ այդ հնարավորությունը՝ ազատելով սխալվելու վախից: Սովորողի ինքնուրույնության նախաձեռնողականության զարգացման առանցքում պետք է դնել ակտիվ ուսուցումը, որն իրենից ենթադրում է այնպիսի մեթոդական համակարգի կիրառում, որը չի ենթադրում ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն: Ակտիվ ուսուցման հիմքում ընկած է գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում սովորողների կողմից: Ժամանակակից ուսուցման ակտիվ մեթոդները նպաստում են սովորողների ազատ ու ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացումը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Ակտիվ մեթոդները համապատասխանում են աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են: Այդպիսի մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերն ու հետազոտությունները, մոդելավորումը և այլն:

Փոխգործունեության ուսուցման մեթոդներն են[2].

- փոխազդեցությունը, փոխուսուցում
- սովորողների միջև համագործակցությունը
- ինքնարտահայտման, սովորողի կարծիքի, դիրքորոշման պնդման խրախուսումը
- հետադարձ կապը:

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.

- սովորողի իմացական գործընթացների կազմակերպումը
- հետաքրքրությունների, նախասիրությունների բացահայտումը
- համագործակցային կարողությունների զարգացումը
- անհատական առանձնահատկությունների բացահայտումը
- հաղորդակցական ունակությունների ձևավորումը
- տրամաբանական մտածողության զարգացումը
- ինքնուրույնության խրախուսումը

[2] [2]Активные методы обучения рекомендации по разработке и применению, 2017, стр.4. 5

Հարկ է նշել, սակայն, որ այս համատեքստում չեն անտեսվում դասավանդման ավանդական մեթոդները: Հաճախ նշում ենք, որ այս կամ այն մեթոդը կիրառելով կհասնենք մեր նպատակին, բայց պետք է նշել, որ յուրաքանչյուր դաս, դասարան տարբեր է, հետևաբար մեկ դասարանում աշխատող մոտեցումը մեկ այլ դասարանում կարող է արդյունք չտալ: Այդպիսով սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման համար դասավանդման մեջ առանցքային դերակատարում ունեն ՏՀՏ գործիքների կիրառումը: Նորագույն տեխնոլոգիաներով դասերն ունակ են սովորողների մոտ առաջացնել հետաքրքրություն կրթական պարտադիր ծրագրերով նախատեսված առարկաների հանդեպ, քանի որ սովորողը օգտվելով համացանցային հարթակներից կամ գործիքներից, ինքնուրույն կարող է ուսուցանվող թեմայի շուրջ տեղեկատվություն հավաքել, ծանոթանալ առցանց առաջարկվող ուսումնաօժանդակ նյութերին: Պետք է նշել, որ ՏՀՏ միջոցների կիրառումը մեծ ազդեցություն ունի նաև մանկավարժների աշխատանքի, ինչպես նաև աշակերտների ուսուցման արդյունավետության վրա: ՏՀՏ-ի օգտագործումը ուսուցչին մեծ հնարավորություններ է ընձեռում առարկայի ուսուցման ժամանակ: Այսպիսով ՏՀՏ գործիքների կիրառումը դասապրոցեսը դարձնում է ավելի ակտիվ, սովորողներն ավելի հետաքրքրությամբ է մասնակցում դասին՝ ցուցաբերելով ինքնուրույն հետազոտելու և նախաձեռնողի դերում հանդես գալու ցանկություն:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանն ուղղված քայլերից է ուսուցչի մեթոդամանկավարժական գիտելիքների ամբողջությունը: Դասի փուլերի հաջորդականության ապահովումը, նոր նյութի հաղորդման, ամփոփման կամ ամրապնդման փուլերի ժամանակ ինտերակտիվ մեթոդների կիրառումը, միջառարկայական և ներառարկայական կապերի ստեղծումը իրենց հերթին ոգևորում են պասիվ աշակերտների՝ նրանց ևս բերելով ակտիվ դաշտ: Այսպիսով քանի որ դասի ընթացքն ակտիվ է, կիրառվում է ՏՀՏ, բազմաթիվ փոխգործուն մեթոդներ, ապա

սովորողը սկսում է ցուցաբերել նախաձեռնություն, բոլոր աշխատանքներում, լավագույն արդյունքներ գրանցելու մղում[3]:

Սովորողների ինքնուրույն մտածողության հմտությունների համակարգի ձևավորումը պատմության դասերին

Ժամանակակից կրթության առաջնահերթ խնդիրներից մեկն այնպիսի անհատի ձևավորումն է, որը կկարողանա կողմնորոշվեկ շրջապատող աշխարհում և կինտեգրվի այդ աշխարհին:

Պատմություն առավել, քան ուսումնական որևէ այլ առարկա, ունի ինքնուրույն մտածողության կարողությունների զարգացման հսկայական հնարավորություններ: Պատմության ուսուցչի աշխատանքի գլխավոր ուղղություններից մեկը պետք է լինի ինքնուրույն մտածողության հմտությունների ձևավորումը: Պատմական երըույթների վերաբերյալ տարբեր գնահատականների և դրանց վերլուծությունների հետ ծանոթությունը աշակերտների գիտակցությունը դարձնում է կաղապարներից ազատ: Չկա այնպիսի տեսություն, վարկած, որ հնարավոր չլինի քննարկել, վիճարկել: Այսպիսով՝ պատմության բովանդակությունը, ինչպես նաև նրա ուսուցման յուրահատկությունները ուսուցչին հնարավորություն են տալիս լայնորեն զարգացնելու աշակերտների ստեղծագործական և ինքնուրույն մտածողությունը:

Պատմության դասերին ինքնուրույն մտածողության ձևավորման առաջարկվող համակարգը, որ հենված է անհատական կողմնորոշող մանկավարժության սկզբունքների վրա, առարկայի նկատմամբ ստեղծում է խոր և կայուն հետաքրքրություն և պատմական կրթության բնագավառում դառնում է առավել արդյունավետ միջոցներից մեկը: Այս համակարգը ենթադրում է պատմության դասերի ժամանակ թեմաների փուլային ուսուցում: Առաջին՝ տեղեկատվական փուլի խնդիրն է աշակերտներին տեղեկություններ տալ հիմնական փաստերի մասին, առանձնացնել դժվար,

[3] Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ 22 https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf:

հիմնախնդրային հարցրեը, ծանոթացնել քննարկվող թեմայի վերաբերյալ պատմական գրականության մեջ գոյություն ունեցող գնահատականներին:Այս փուլում հիմնական մեթոդը խոսքայինն է: Երկրորդ փուլի նպատակն է խորացնել ուսումնասիրվող թեմայի հիմնական հիմնախնդրային հարցերը: Դասն անցկացվում է ակտիվ ձևերով՝դաս-սեմինար, դաս-կոնֆերանս, դաս-դերախաղ և այլն:Սա աշակերտներին հնարավորություն է տալիս խորանալու դարաշրջանի մեջ, առանձնացնել պատմական զարգացման ուղղություններն ու միտումները: Երրորդ փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, որի ժամանակ կատարվում է ինքնուրույն աշխատանքի ամփոփում, որի ժամանակ օգտագործվում է պատմության ուսուցման բևեռային-կառուցվածքային մեթոդը:Նշված մեթոդի էությունն այն է, որ պատմական յուրաքանչյուր հիմնախնդիր դիտարկելիս հեշտությամբ հայտնաբերում ենք նվազագույնը երկու հակադիր տեսակետներ, երկու ծայրահեղ մոտեցումներ[4]: Անհրաժեշտ է ընդունել երկու հակադրությունների գոյություն ունենալու իրավունքը և, որպես պարտադիր պայման, դրանք միմյանց հետ հակադրելը: Այս մեթոդի շրջանակներում հակադրությունները չեն դիտարկվում հստակ սահմանազատված ձևով: Բևեռային-կառուցվածքային մեթոդը հնարավորություն է տալիս տեսնելու ոչ միայն բևեռացված տեսակետները, այլև դրանց միջակայքում գոյություն ունեցող բոլոր գնահատականների բազմազանությունը՝ պատմությունը դարձնելով ավելի լիարժեք, ծավալուն և գունեղ: Այս փուլի աշխատանքի գլխավոր արդյունքը ուսուցանվող թեմայի հիմնախնդրի նկատմամբ աշակերտների անձնական վերաբերմունքի ձևավորումն է: Անձնական վերաբերմունք ասելով՝ հասկանում ենք յուրաքանչյուր աշակերտի մտավոր և արժեքային ընտրությունը՝ չբացառելով այլ տեսակետների գոյություն ունենալու իրավունքը: Նշված մեթոդի հաջող իրագործման համար անհրաժեշտ է որոշակի մեթոդական հնարների ընտրություն և կիրառում: Առաջին փուլում խոսքային մեթոդների գերակշռությունը բացատրվում է մի շարք գործոնների առկայությամբ: Ելակետային է համարվում այն համոզմունքը, որ պատմության դասավանդման ժամանակ ուսուցչի բանավոր խոսքն ունեցել է և այժմ էլ ունի գլխավոր դերակատարություն:Ուսուցչի կենդանի խոսքն օգնում է ուսումնական գործընթացի մեջ ներգրավելու պատմական գիտության նորագույն տվյալները, հնչեցնելու

[4] Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Ա. Սարգսյան, Ա. Մալոյան,Ե.2009, էջ 49:

արդիականության հիմնախնդիրները: Միաժամանակ այն ներառում է տեղեկատվության այլ աղբյուրներ՝ փաստաթղթեր, նկարներ,աղյուսակներ,քարտեզներ, տեսանյութեր և այլն: Դասախոսության, զրույցի կամ էլ պատումի հիմքում ընկած է ոչ միայն տեղեկատվական մոտեցումը, թեև այն կարևոր է, քանի որ պատմության ուսուցումն առաջին հերթին ենթադրում է փաստական նյութի յուրացում: Կարևոր նշանակություն ունի նաև հիմնախնդրային-հայեցակարգային մոտեցումը, որն առաջադրված հարցերի համար պատրաստի և անվիճելի պատասխաններ չի տալիս: Առաջին փուլում առաջադրված նպատակը կատարված է համարվում, եթե աշակերտներն ուսուցչի հետ համատեղ ծանոթանում են ուսումնասիրման համար նախատեսված ուսումնական տեղեկատվության ամբողջ ծավալին: Թեմայի ուսումնասիրման երկրորդ փուլում սկսվում է աշակերտների ինչպես անհատական, այնպես էլ խմբային ինքնուրույն աշխատանքը: Դասագրքի, փաստաթղթի, լրացուցիչ գրականության հետ կատարված աշխատանքի արդյունքը դասի ժամանակ կազմակերպված բանավեճի ընթացքում ներկայացվում է որպես սեփական փաստարկված դիրքորոշում: Երրորդ փուլում ուսուցիչը սովորողների հետ բացահայտում է պատմության ոչ միանշանակ պատասխան ունեցող հարցերը, համադրում է դրանց տրված տարբեր գնահատականները, որի արդյունքում երևույթների նկատմամբ աշակերտների մոտ ձևավորվում է սեփական տեսակետ և գնահատական: Միևնույն ժամանակ աշակերտները սովորում են ոչ միայն բանավիճել, քննարկել, մտածել, հիմնավորել, ապացուցել և պաշտպանել իրենց տեսակետները, գիտակցել, թե ինչ չափանիշներ են ընկած դիրքրորոշման ընտրության հիմքում, այլև լսել և հարգել ուրիշի կարծիքը, հաշվի առնել այն և այլն:

Պատմության դասավանդման առավել արդյունավետ և ոչ ստանդարտ դասի տեսակներն.

- Դաս – խաղերը
- Դասեր՝ մրցույթներ, վիկտորինաներ
- Դաս- Ի՞նչ. Որտե՞ղ, Ե՞րբ
- Դաս- «Կլոր սեղանի շուրջ»
- Դաս – սեմինար

- Դաս – հարցազրույց
- Դաս – դատարան
- Դաս - գիտելիքների փոխանակում
- Նախագծերի մեթոդ
- Դաս - էքսկուրսիա
- Աշխատանք սկզբնաղբյուրի հետ

Դաս-խաղերի մեթոդի էությունը խաղի և աշխատանքի սինթեզումն է, որի ուսումնական նպատակը նման է խաղային առաջադրանքի, և դասը ենթարկվում է խաղի կանոններին, դպրոցականների կողմից պարտադիր ոգևորությանը և բովանդակության նկատմամբ հետաքրքրությանը: Նման դասերին ստեղծվում է դրական, ոչ ձևական մթնոլորտ, խաղերը զարգացնում են սովորողների ինտելեկտուալ և հուզական ոլորտը:

Դաս- մրցույթներ, վիկտորինաները անցկացվում են լավ տեմպերով և թույլ են տալիս ստուգել սովորողների մեծ մասի գործնական և տեսական գիտելիքները ընտրված թեմայի վերաբերյալ: Խաղեր - մրցույթները կարող է հորինել ուսուցիչը կամ լինել հայտնի հեռուստատեսային մրցույթների վարողը:

Դաս - <<Ի՞նչ. Որտե՞ղ, Ե՞րբ>> մեթոդի կիրառման ժամանակ աշակերտների մի խումբ նախօրոք բաժանվել է երեք խմբի, բաժանվել են տնային առաջադրանքներ, պատրաստվել թիմերի համարներ, ավագների համար խաղացողների անուններով թերթիկներ: Խաղը բաղկացած է վեց փուլից.

1. Ուսուցչի ներածական խոսքը:
2. Ջերմացում - թեմայի բոլոր առանցքային հարցերի կրկնություն:
3. Սահմանեք հարցի մասին մտածելու ժամանակը և պատասխանի համար միավորների քանակը:
4. Խաղ «Ի՞նչ. Որտե՞ղ. Ե՞րբ»
5. Ամփոփում:
6. Ուսուցչի եզրափակիչ խոսքը

Դաս «Կլոր սեղանի շուրջ» մեթոդը կոլեկտիվ քննարկման հնար է, որը սովորեցնում է անկախությանը, ակտիվությանը, իրադարձություններին պատկանելու զգացմանը։Նախապես ընտրվում է թեմայի խնդիրների վերաբերյալ առաջնորդ և 5-6 մեկնաբան: Ուսուցիչը ներկայացնում է ներածական մասը, ընտրվում են թեմայի հիմնական ուղղությունները, ապա սովորողներին առաջարկում է հարցեր, որոնց լուծումը կախված է ամբողջ խնդրի լուծումից։ Վարողը շարունակում է դասը, նա խոսքը տալիս է մեկնաբաններին, ամբողջ դասարանին ներգրավում է քննարկման[5]։

Դաս-սեմինար հնարը կիրառվում է թեմայի, բաժինների ավարտից հետո։ Սեմինարի հարցերը տրված են նախապես՝ արտացոլելով այդ բաժնի նյութը և միջառարկայական կապը։ Առաջադրված հարցերի սպառիչ պատասխանները լսելուց հետո ուսուցիչը ամփոփում է դասը և նպատակադրում է սովորողին նախապատրաստվել դասին՝ թեստ այս թեմայով:

Արդյունավետ մեթոդներից է «Կատարողական դաս»-ը։ Պատրաստվում է ներկայացում, որը նպաստում է երեխաների լեզվական հաղորդակցման հմտությունների զարգացմանը և նրանց անհատական ստեղծագործական կարողությունների բացահայտմանը։ Աշխատանքի այս տեսակն ակտիվացնում է սովորողների մտավոր և խոսքային գործունեությունը, զարգացնում նրանց հետաքրքրությունը առարկայի նկատմամբ։

Դաս-էքսկուրսիան արդիական և կիրառելի է բոլոր ժամանակներում և բնագավառներում։ Ծանոթացնելու, զարգացնելու, արժեքային համակարգը հարստացնելու արդյունավետ մեթոդ է։

Նախագծերի մեթոդը վերջին տարիներին ավելի ու ավելի շատ կողմնակիցներ է ձեռք բերում։ Այն նպատակաուղղված է զարգացնել երեխայի ինքնուրույն մտածողությունը, սովորեցնել նրան ոչ միայն անգիր անել և վերարտադրել այն գիտելիքները, որոնք նրան տալիս է դպրոցը, այլ նաև կարողանալ դրանք կիրառել գործնականում: Ծրագրի մեթոդոլոգիան առանձնանում է նախագծի վրա աշխատելիս առաջադրանքների կատարման համագործակցային բնույթով, միաժամանակ

[5] Ուսուցչի ձեռնարկ, Ա. Նազարյան, Ա. Սարգսյան. Ե. 2007, էջ 15

իրականացվող գործունեությունը բնածին ստեղծագործական է և կենտրոնացած է սովորողի անձի վրա: Նախագծի թեման ընտրելիս ուսուցիչը պետք է կենտրոնանա սովորողների հետաքրքրությունների և կարիքների, նրանց հնարավորությունների և առաջիկա աշխատանքի անձնական նշանակության, նախագծի վրա աշխատանքի արդյունքի գործնական նշանակության վրա: Ավարտված նախագիծը կարող է ներկայացվել տարբեր ձևերով՝ հոդված, առաջարկություններ, ալբոմ, կոլաժ, զեկույց, գիտաժողով, մրցույթ, տոն, ներկայացում: Նախագծի վրա աշխատանքի հիմնական արդյունքը կլինի եղածի ակտուալացումը և նոր գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը և նոր պայմաններում դրանց ստեղծագործական կիրառումը: Նախագծի վրա աշխատանքն իրականացվում է մի քանի փուլով և սովորաբար դուրս է գալիս դասարանում ուսուցման գործողություններից՝ թեմայի կամ նախագծի խնդրի ընտրություն, կատարողների խմբի ձևավորում, ծրագրի աշխատանքային պլանի մշակում, ժամկետների որոշում, առաջադրանքների բաշխում սովորողների միջև, առաջադրանքների կատարում, յուրաքանչյուր առաջադրանքի արդյունքների քննարկում խմբում, համատեղ արդյունքի գրանցում, ծրագրի հաշվետվություն, ծրագրի իրականացման գնահատում: Նախագծի մեթոդաբանության համաձայն աշխատանքը սովորողներից պահանջում է որոնողական գործունեության, իրենց գործողությունների համակարգման, ակտիվ հետազոտության, կատարողական և հաղորդակցական փոխգործակցության բարձր աստիճանի անկախություն: Ուսուցչի դերն է աշակերտներին նախապատրաստել նախագծին, ընտրել թեմա, աջակցել սովորողներին աշխատանքի պլանավորման հարցում, վերահսկել և խորհուրդ տալ սովորողներին ծրագրի ընթացքում: Այսպիսով, նախագծի մեթոդի հիմնական գաղափարը համատեղ ստեղծագործական աշխատանքի ընթացքում տարբեր տեսակի վարժություններից շեշտը տեղափոխելն է սովորողների ակտիվ մտավոր գործունեությանը:

Աշխատանք սկզբնաղբյուրի հետ. Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է ուսումնական գործընացը ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու տեսանկյունից: Սկզբնաղբյուրներում մշտապես առկա են տարաձայնությունների ու խնդիրների շուրջ տարբեր մեկնաբանություններ: Այդ հանգամանքը սկզբնաղբյուրները դարձնում է կրթության գործընթացը խթանող

միջոց: Մասնավորապես սկզբնաղբյուրների հետ աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին ոչ միայն տեղեկացնելու հակասությունների և տարաձայնությունների մասին, այլև նրանց մասնակից դարձնելու դրանք քննարկմանը: Մասնակից դառնալով այդ բանավեճերին՝ աշակերտները հնարավորություն են ստանում ավելի անմիջականորեն և ամբողջականորեն պատկերացնելու քննարկվող նյութը: Սկզբնաղբյուրները կարևոր դեր ունեն աշակերտների գիտելիքները, հմտությունները, վերլուծական կարողությունները զարգացնելու գործում: Աշակերտները հնարավորություն են ստանում, ուղղակիորեն առնչվելով նյութին, զարգացնելու զարմանալու ունակությունը, քննադատական մտածողությունը, հարցադրումներ անելու, բացատրելու և մեկնաբանելու կարողությունը: Սկզբնաղբյուրները հետաքրքիր գաղափարների շտեմարան են, որոնք ինքնուրույն ու ստեղծագործական մտածողությունը զարգացնող կարևոր գործիքներ են: Սկզբնաղբյուրները կարող են ծառայել որպես դասագիրքը լրացնող միջոցներ: Դրանք զարգացնում են ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտությունը: Շատ հաճապ դասագրքերը մատուցում են պատրաստի գիտելիք: Ու քանի որ մեր կրթական համակարգում դասագիրքն ունի <<սուրբ գրքի>> կարգավիճակ, երեխաներին շատ քիչ հնարավորություն է տրվում հետազոտական աշխատանք կատարելու: Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է դասագրքերին այլընտրանք ունենալու, դրանց լրացնլու իմաստներով[6]:

Սկզբնաղբյուրի հետ կատարվող աշխատանքը փայլուն հնարավորություն է միջառարկայակն կապերը զարգացնելու տեսանկյունից: Նկարները, ֆիլմերը, գրական աղբյուրները, պատմական և իրավական փաստաթղթերը ինտեգրատիվ գիտելիքներ հաղորդելու և հիմնարար քաղաքացիական հմտություններ ձևավորելու ազդեցիկ միջոցներ են:

Եվ ինչքան էլ մեթոդները շատ են ու տարբեր, այդուամենայնիվ ցանկացած ակադեմիական առարկայի իրական յուրացում անհնար է առանց երևակայության ակտիվ գործունեության, առանց դասագրքում գրվածը, ուսուցչի ասածը

[6] Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Ա. Սարգսյան, Ա. Մալոյան,Ե.2009, էջ 54:

պատկերացնելու ունակության, առանց տեսողական պատկերներով գործելու ունակության։

Այսպիսով, երեխայի երևակայությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար անհրաժեշտ է բացառապես պատշաճ առաջնորդություն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամեն ինչի հիմքում դրված է ազատության գաղափարը: Վստահել երեխային, հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու՝ նպաստում են սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը: Այսինքն՝ ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները ճիշտ և տեղին կիրառելիս կնպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչը այսօր արդիական ու խրախուսելի է համակողմանի զարգացած անհատականություն ձևավորելու գործում:

Սույն հետազոտության մեջ հաշվի առնելով ուսումնասիրված թեմայի նպատակներն ու դրանից բխող խնդիրները՝ կատարեցինք հետևյալ եզրահանգումները՝

- նախաձեռնողականության, ինքնուրույնության ու ստեղծարարության զարգացման գործում առանցքային դեր ունի հանրակրթական ուսումնական հաստատությունը
- նախաձեռնողականություն, ինքնուրույնություն ու ստեղծարարություն ունակությունների բնականոն զարգացումը մեծապես կապված է ուսուցչի աշխատանքից՝ դասի պլանավորումից մինչև մեթոդների ու հնարների ընտրություն
- կրթության ոլորտի արդի բարեփոխումները մեծապես նպաստում են սովորողների մեջ հետազոտական ու ստեղծարարության ունակություններ զարգացնելու, ինչպես նաև վերջիններիս դասապրոցեսի մեջ ավելի արդյունավետ ներգրավելուն
- պատմության դասավանդման շրջանակներում ճիշտ պլանավորված դասի ընթացքը կարող է մեծապես նպաստել սովորողների մոտ գիտելիքների ամրակայումից բացի գործնական կարողություններ ձևավորելուն
- պատմության դասերին փոխգործուն մեթոդների կիրառումն օգնում է սովորողին լինել ավելի բաց համագործակցության համար, ինչպես նաև նպաստում է նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելուն:

- Նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը ինքնուրույնությունը, որոնք նաև ինքնաճանաչման լայն հնարավորություն են տալիս սովորողին, արդի կրթական համակարգի և առհասարակ կյանքի այլ ոլորտների համար պարտադիր բաղադրիչ է, ուստի սովորողը պետք է ունենա բոլոր հնարավորությունները դպրոցում նման ունակություններ ձեռք բերելու և զարգացնելու:

Եվ խոսքս ցանկանում եմ ավարտել Վ.Գ. Բելինսկու հետևյալ արտահայտությամբ՝ «Առանց նոր բանի ձգտելու՝ չկա կյանք, չկա զարգացում, չկա առաջընթաց»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանկավարժություն, Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Ե. 2008/3-4

2 . Ուսուցչի ձեռնարկ, Ա. Նազարյան, Ա. Սարգսյան. Ե. 2007

3. Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Ա. Սարգսյան, Ա. Մալոյան,Ե.2009

4. Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020 https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

5.Активные методы обучения рекомендации по разработке и применению, 2017